Արձանագրություն N 7

«ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սպիտակ 30.11.2018թ.
ժ. 12:00

Մասնակցում են՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Համբարյան, Ն. Յարմալոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Ավետիսյան

Ընդունել ի գիտություն, որ «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» և «Ույուտ Սենթր» ՍՊ ընկերություններին ծանուցվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» և «Ույուտ Սենթր» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացվել են համանման աշխատանքների կատարման 2 պայմանագրեր, որոնք ուսումնասիրելու ընթացքում գնահատող հանձնաժողովը հայտնաբերել է հետևյալ անհամապատասխանությունները.

«ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև 23.09.2015թ. կնքվել է թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 պայմանագիր 27 969 480 ՀՀ դրամի չափով: Պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը փոփոխվել է և պայմանագրի գինը դարձել է 27 024 562 ՀՀ դրամ, սակայն այդ փոփոխությունը հիմնավորող որևէ փաստաթուղթ ներկայացված չէ, իսկ հանձնման-ընդունման արձանագրության կազմման ամսաթիվ նշված է 29 դեկտեմբեր 2018թ.:

«ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի և Նորաբացի գյուղապետարանի միջև 03.12.2015թ. կնքվել է թիվ ԱՄՆՀ ՊԸԱՇՁԲ 15/4 պայմանագիր 16 583 400 ՀՀ դրամի չափով և պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2015 թվականի դեկտեմբերի 30-ը: 13.06.2016թ. կազմված համադրման ակտի համաձայն պայմանագրի գինը դարձել է 16 133 300 ՀՀ դրամ: 30.12.2015թ. կողմերի միջև կնքված թիվ 1 համաձայնագրով պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 16.06.2016թ., ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքին և նշված պայմանագրի 8.5 կետին, որտեղ նշված է, որ պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով: Նշված պայմանագրի թիվ 6 հանձնման-ընդունման արձանագրությունը կազմված է 01.02.2016թ. կնքված թիվ ԱՄՆՀ ՊԸԱՇՁԲ 15/4/1 լրացուցիչ պայմանագրի մասով, սակայն լրացուցիչ պայմանագիրը ներկայացված չէ, ինչպես նաև ԱՄՆՀ ՊԸԱՇՁԲ 15/4 պայմանագրում և հանձնման-ընդունման արձանագրություններում պատվիրատուի հաշվեհամարները տարբեր են: Նույն պայմանագրով նախատեսված աշխատանքների համար «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից դուրս գրված թվով վեց հաշիվ ապրանքագրերից չորսը պատվիրատուի կողմից ստորագրված չեն, իսկ թիվ Ա9197699717 հաշիվ ապրանքագրի մեջ

մատակարարման ամսաթիվ նշված է 1 մարտի 2016թ., իսկ դուրս գրման ամսաթիվ 17 նոյեմբերի 2016թ.:

Հաշվի առնելով նշված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը, գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» և «Ույուտ Սենթր» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտը մերժել:

Որոշումն ընդունվել է՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

2. ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» և «Ույուտ Սենթր» ՍՊ ընկերությունների տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Որոշումն ընդունվել է՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Միրզոյան

Անդամներ՝ _____ Լ. Համբարյան

_____ Ն. Յարմալոյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան